

են գերեզմանները կամ շատ-շատ «բաց-ուում են գերեզմ. բերանները»:

Շատանում ենք այս մի քանի պատահա-րար առնուած օրինակներովը. կարծում ենք թէ այսքանը բաւական է ցոյց տալու հա-մար թէ ինչն ենք համարում շախազանց ճշգրտութիւն Յ. խան Մասէհեանի թարգմա-նութեան մէջ. նմանապէս ցանկալի էր մեզ յոհանել լուրջ տեղերում «սպրտնած» ար-լոր», «պոստեց յօնքը» և սոցա նման ոչ գրականական բառեր ու դարձուածներ, որոնց թիւը պէտք է խոստովանել «Համլէտի» թարգմանութեան մէջ բարեբաղդաբար շատ և շատ աննշան է: Չենք ընդունում ան-շուշտ և «համակերպացնել» բայը, որ գործ է ածում «Համլէտը» իւր գեղեցիկ մենախօ-սութեան մէջ, Բ. արարուածի վերջում: Շատ խորթ է թուում մեզ նաև «տէր իմ» անունը, որ Օֆելիան տալիս է իւր հօրը՝ նորա հետ խօսելիս. անգլիական «my lord»-ը համարձակ կարելի էր մի կողմը թողնել հա-յերէնում և սովորական «հայր իմ» բա-ռերը գործ ածել:

Սակայն բոլոր յառաջ բերուած աշար-մար դարձուածները բնու չեն նուազեցնում Մասէհեան խանի թարգմանութեան արժա-նաւորութիւնները, և մեզ մնում է միայն ցաւել որ տեղի սղութեան պատճառով չենք կարող այստեղ ընթերցողին մի ճաշակ տալ այդ մասին. այդ էլ բանաստեղծութիւն սի-րողը թող ինքը կարգայ և վայելէ:

Ուշադրութեան արժանի է նաև Մա-սէհեան խանի թարգմանութեան տաղտա-փութիւնը, որի մասին կր խօսենք «Արա-րատի» յաջորդ համարում մի առանձին յօդ-ուածով:

Թ. Թ.



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԼՐԱԳ-ՐՈՒԹԵԱՆ. Ի ՍԿՋԲԱՆԷ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ  
ԳՐԵՑ Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ  
1893. Վիեննայ. էջ 226 ութամծալ փոքրագիր.

- Թէ միմնաթով վարդ ընծայեն, հոտւղտելէն յետ կեցիր. Փուշն որ անուու. լաւ է քնգ:
  - Թէ տմարողին կամուրջ կապէ, դուն վրայեն մի անցնիր. Ջուրը տանի թող զքնգ:
  - Թէ աղուէսը հրաւիրէ, դուն ի շըքին մի պարկիր. Առիւծն ուտէ թող զքնգ:
- Գ. Արքեպիսկ Այվազովսի:

Քիչ չէ պատահում որ միեւնոյն նիւթի մասին միա-ժամանակ գրում են երկու հոգի. մի աշխատութիւն երկու

հոգի առանց մինը միւսի գիտութեան աշխատում են ի կա-տար ածել եւ տպագրութեան յանձնել:

Գիցուք մինը մեծ տանջանքով գրում կամ թարգմա-նում է մի նիւթ. մի աշխատութիւն եւ ահա՛ աւարտելուց յետոյ միայն լսում է որ նոյն բանը մի ուրիշն էլ է պատ-րաստել տպագրութեան. Սյտեղ ինքն ըստիքեան առաջին տեսածը չի գնահատուում կամ երկրորդը պատարակուում. այլ գնահատուում է արժանաւորը. մինը յետ է ձգուում. միւրը ընդունելութիւն գտնում:

Սոյն օրինակ դէպք պատահեց Վիեննայի Միթար-եան հայրերից՝ Հ. Գրիգորիս վ. Գալէմբերեանի վերջերս լոյս ընծայած «Գատնութիւն հայ լրագրութեան» երկի ա. գրքոյիկի եւ տողերիս գրողի «Հայոց պարբերական մա-մուլը» խորագրով մի գործի հետ: Հայր Գալէմբերեան «Հանգէս մասօրեայի» մէջ սկսեց մի տեսութիւն գրել հայ լրագրու-թեան մասին, դեռ 1887 թուականից. կաղի կաղ առաջ գնալով իւր պատմութեան ծայրը հասցրեց 1859 թուակա-նի վերջերը. «Հանգէսի» 1890 թուականի տետրակների մէջ. Սառալին փորձը չէր Հ. Գալէմբերեանի գործը. միայն մինչեւ իւր ժամանակ եղածներից ընդարձակ. թէեւ ոչ ազատ ան-նեղելի սխալներից. Հեղինակը շատ սակաւ աղբիւրներ է ու-նեցել իւր ձեռքի տակ ինչպէս յիշել է ինքը՝ դորա համար եւ սպասելի չէր մի լիակատար եւ ճշգրիտ գործ. Հայ լր-րագրութեան մասին աղբիւրներ կան բացի Հ. Գրիգորիսի ի-շածներից եւ արքից. աւելի քան տասն. նոյն չափ էլ հատ ու կտոր գրուածներ. գրչագիր նիւթեր, տեղեկութիւններ, նամակներ որոնք մինք այժի առաջ ենք ունեցել մեր «Հայոց պարբերական մամուլը» գրելիս:

«Հանգէս» մասօրեայ. լրագրի 1887. 88. 89. 90 թուերի միջի ժողովելով Հ. Գալէմբերեան որպէս իւր գոր-ծի առաջին հատոր վերջերս 1893 թուին հրատարակեց առանձին գրքոյիկով:

Վերապատուելի հայրը շտապել էր իւր գրքից մի օրի-նակ ուղարկել էր կոստանդնուպոլիս. Սահակ Մեսրոպեան 1894 թուականի մրցանակաբաշխութեան մասնակցելու համար. Գննադատները համեմատելով նիւթերի պակա-սութիւնը, ժամանակագրական այժի ընկնող սխալները. չէ-ին կարող յետ չը ձգել արժանաւոր գրուածների շարքից. եւ ինչպէս յայտնի է ոչ մի պարագեւատրութեան յարժանա-ցաւ որպէս «կիսկատար» գործ. Իսկ անհամեմատութիւն չի լինի կարծում ենք արձանագրել այստեղ որ նոյն թուականի մրցանակաբաշխութեան ուղարկուած «Հայոց պարբերական մամուլը» ստուար աշխատութիւնը. որ 1794—1894 հայ լր-րագրութեան ամբողջացած պատմութիւնն է բազմաթիւ ծա-նօթութիւններով. առաջին կարգի պարգէլի հետ արժանա-ցաւ Գործադիր Գնորդն Բանձնաժողովի քաջալերութեան. թողնելով վերջինիս մասին գրելը ուրիշներին. որոնք գործին տեղեկ են եւ լուրջ քննադատներ. խօսենք առաջինի մա-սին թէ ինչ կէտերում Հ. հեղինակը անձեռնհաս է եղել իւր տեսութիւնը գրելիս:

Յիշենք որ սոյն գրքոյիկի մասին մեզանից առաջ գրողնե-րը չեն վերաբերուել որպէս քննողներ. չեն քրքրել նիւթեր, սխալների մասին չեն գրել. այլ թիթեւ ակնարկ գրքի կազմի եւ նիւթի արժանաւորութեան վերայ. Հինգ տարուայ չափ կարելոյն չափ մանրադնին հետադատած լինելով հայ մամուլի գործի անցեալն ու ներկան. դժու. ր չէ մեզ մոտել Հ. Գա-լէմբերեանի գրքոյիկի ներքին խաւերի մէջ. մասնանիշ անե-լով այն թերութիւնները. որ ինչպէս ասացինք սպողել են հայր սուրբի աշխատութեան մէջ:

Հայ անգրանիկ «ՈՂԻՍՏԱՐ» Երազրի մասին խօսելով՝  
 Հ. Գ. ասում է որ այս ամսագիրը տեւել է «երեք ամբողջ»  
 տարի, Երազր գրքային վերջում իւր «Ուղղելիք»-Յուսելիքի»  
 մէջ մասամբ ուղղել է իւր սխալը, Սէլի պարզաբանելու հա-  
 մար, յիշենք որ «Ուղղարար» 1794—1796 թուերի ըն-  
 թացքում հրատարակուել է միայն մէկ եւ կէս տարի, որ է  
 18 տետրակ, այսպէս՝

1794 թ.	ամիսը Ուղարարի	տետր կամ թիւ.
.	Քիբայ	1.
.	Գամայ	2.
.	Համբրայ	3.
.	Արամ	4.
1795 թ.	Ովղան	5.
.	Ներհան	6.
.	Շամոյ	7.
.	Ուղամ	8.
.	Շքաթ	9.
.	Նահայ	10.
.	Ղամար	11.
.	Նադայ	12.
.	Թիրայ	13.
.	Գամայ	14.
.	Համբրայ	15.
.	Արամ	16.
1796 թ.	Ովղան	17.
.	Ներհան	18.

Սյուզէս ուրեմն 18 տետրակ է միայն լոյս տեսել «Ուղ-  
 դար» ամսագրից բարեյիշուտակ Տ. Բարոթիւն ք. Շմա-  
 ւոնանի ձեռքով, որ կը նշանակէ մէկ եւ կէս տարի, ոչ «ամ-  
 բողջ երեք» տարի, (Երազիր 1 էջ 23).

«ՈՂԱՍՏԱՐ ԲԻԻԶՈՒՆԳԻԵՆԻ» տետրակները մեր աջքի  
 առաջ ունենալով աւելորդ չի՞ք համարում լրացուցիչ տեղե-  
 կութիւններ տալ, քանի որ Հ. Գալէմբեարեանինը շատ հա-  
 մառու է եւ անկատար:

Տարեգրիտ մէջ իւր «քանչիւր տարուայ ամիսների սկիզբ-  
 ներում գիտեցուած են բաւականին յաջող փորագրուած  
 պատկերներ, յօգուածներին պատշաճաւոր, Յօգուածներն են  
 բարդական րովանդակութեամբ աւարտութիւններ, պատկեր-  
 ներ, խրատներ եւ այլն, (Գրքիցորդին ծանօթացնելու համար  
 առաջ ենք բերում 1820 թուականի տետրակներ ամսի պատ-  
 կերի տակ եղած «խրատն» անփոփոխ):

ԱՍՍՏՈՒԱՐ ԻՄԱՍՏՈՒՅՆ

Կըլայ խօսք, որ հազար գործի տեղ կը բռնէ:

Երկու հոգի աղուակահաններէն ձեռով դրօսանքի ելան պղծ  
 տիւրու բայց մէկը անոնցմէ շատ չարագործ երիտասարդ մըն  
 էր: Աստուծոյ ահը չունէր սրտին մէջ, որչափ կը խրատէին,  
 իր գործքերէն չէր յետ կենար իբր թէ՛ միշտ մնալու էր սշ-  
 խարհին մէջ, անանկ կապրէր:

Աստքը լնանէ իւր երթալով, հեռու, վայրենի (՞) տե-  
 դեր ընկան, ան կողմը չի կարծած տեղ մը մէկ գերեզման մը  
 առաջներին ելաւ որ վրան քարերով աստիճաններ էր շին-  
 ուած, մէկ բարձր շէնք մըն էր, վերի դին ալ գրուածներ կա-  
 յին, Այս երիտասարդը լրամիմալով չի կարծած տեղ ասանկ  
 շէնք գտնալ, աստիճաններէն վեր ելաւ, որ վերի գերը կար-  
 դայ, Գրուածքը տող տող սա խօսքերն էին—

Ես մարդ մըն էի քեզի պէս,  
 Գարձայ հոգ եղայ գետնին պէս  
 Ես չեմ կրնար հոգ ըլլալ քեզի պէս,  
 Դուն պիտոր ըլլաս ինձի պէս:

Իմ տեղը աս քարերը շարեցի, աս գիրս գրեցի:

Աս խօսքերը կարդալով ան երիտասարդի՝ սիրտը անանկ  
 մը արթնցաւ, անանկ ինքն իրեն եկաւ, դըստացաւ, որ բու-  
 լորովին իրեն վարքը փոխեց, բարի եղաւ:

«Եղանակ Բիւզանդ.» 1820  
 էջ 52. (Երազ. 3. էջ 27).

«ԳԻՏԱԿ ԲԻԻԶՈՒՆԳԻԵՆԻ» ամբողջ տետրակները մեր  
 ձեռքում ունենալով, աւելի մանրամասն եւ ճշգրիտ տեղե-  
 կութիւններ կարող ենք յայտնել Հ. Գ.-ին, Պարբերականիս  
 ընդարձակ խորագիրն է՝

ԳԻՏԱԿ ԲԻԻԶՈՒՆԳԻԵՆԻ

«Պատմութիւն քաղաքական ու պատերազմական, բա-  
 նասիրական ու եկեղեցական գիտութեան, որ հիմնկրան  
 տեսներ» կըլլան աշխարհիս վրայ, — Բաժանուած է ըստ կար-  
 դի ժամանակագրութեան, որ իբր տարեգրութիւն մըն է  
 տարուան, (Երազիր 5. էջ 30).

«ԹԱԳՈՒԻ ՄԻ ՎԱԳՈՅԻ ԼՐՈՅ ԳԻՐ» — գրում է Հ. Գա-  
 լէմբեար, որ միանգամայն սխալուում է: Յիշեալ շաբաթաթեր-  
 թի խորագիրն է «Լոյս գիր» Մեծի Տէրութեանն Օսմանեան,  
 որ 1832 ի սկիզբներէց հրատարակուեց հազիւ մի տարի  
 (Երազիր 6 էջ 34).

«ՅԱՅՏԱՐԱՐ ԼՐԱԳԻՐ» սկսուած է ոչ թէ 1847-ին  
 պէ 1846 թ. օրոտտոի 27-ից նոմբրա 1 գրուելով: մինչեւ  
 1849 թ. փետրուարի 5-ը (նոմբրա 99) տեսնուած է: (Եր-  
 րազիր 11. էջ 60).

«ԱԶԳԱՍԷՐ» Թաղիաթեանց Մերսով պարկաւազի երկ-  
 շաբաթաթերթի, Հնդկաստանի երկու այլ պարբերականներ՝  
 Հայելի Կալկաթեան, եւ «Շտեմարանի, մասին մինչեւ վերջերքս  
 ճիշդ եւ բաւականացուցիչ տեղեկութիւններ պակասում էին,  
 Ահա Կալկաթայից պ. Մերսով պ. Սէթեան «Ամօրեայ  
 Հանդիսի» 94 թուականի գեկտեմբերի տետրակում մի թըղ-  
 թակցութեան մէջ բաւականին ամիտի եւ հում տեղեկու-  
 թիւններ է հաղորդում յիշեալ երեք հնդկահայ թերթերի  
 մասին որից կարելի է օգտուել, Յատուկ այս լրագիրների մա-  
 սին մեր Հնդկաստան ուղարկած երկու պատուիրած նամակնե-  
 րը որով մեր մի հայրենակցից տեղեկութիւններ էինք խնդրում  
 (Երազիր 14. էջ 81) մնացին անպատասխան:

«ՀՈՅՈՍՏԱՐ» շաբաթաթերթին Հ. Գալէմբեար միաց-  
 րել է «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» լրագիրը, երեւի նոյն  
 քաղաքում եւ նոյն խմբագիրներին ձեռքով հրատարակուած  
 լինելու համար, (Երազիր 16. էջ 93)

«ՈՂԻՍՏԱՐ» անուսով մի լրագիր է յիշում վերապատ-  
 ուելի հայրը 1846 թուականին, սակայն չարաչար սխալուում  
 է, Բացի անգրանիկ «Ուղղարարից» Մագրատում եւ ոչ մի ուրիշ  
 տեղ «Ուղղարար» չի եղել: Կըլել է «Ուղղարար Բիւզանդեան»,  
 Կոստանդնուպոլսում: որ բոլորովին այլ է, Գրքային հեղինա-  
 կը շփոթուել է «Ուղղարար» Արարատեանի 1846 թ. թիւ  
 272 ի մէջ եղած մի լուրից որ վերաբերում է «Ուղղարարին»,  
 Սա այն է, որ Թաղիաթեանի դէմ հակառակ ուղղութեամբ  
 գործելու համար տեղացի քանի մի ուսեալ անձինք կամեցան  
 մի կիսամետայ լրագրութիւն հրատարակել, բայց տալագրական  
 եւ այլ խոչընդոտների հանդիպելով, յաջողութիւն չը գտան!  
 (Երազ. 47. էջ 93).

«ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ» Երազրի մասին խօսելիս Գալէմբեար-

եան վարդապետն ասումէ որ «բաւական չէր Հնդկաստանում կալիֆթայի եւ Մադրասի «Ազգասէրն» ու «Բանասէրը»։ Անգլափորումէլ Հրատարակուել սկսեց «Ուսումնասէրը»։ Յայտնումենք հ. Գ. ին որ Սինդախոր քաղաքը ոչ թէ Հնդկաստանումն է, այլ Մալակկա թերակղզում (լրագիր 31 էջ 113)։

«ԱՐԱՐԱՍ» շարափաթերթի մասին խօսելով որը հրատարակուում էր թիֆլիսում Գարիէլ ք. Պատկանեանի խմբագրութեամբ ասում է սակայն քաղաքական մաս մը ամենեւին չունէր այն ինչ «Արարտ» քաղաքական, սուբստորական եւ բանասիրական լրագիր էր (լրագիր 23 էջ 119)։

«ՆՈՅՆԱՆ ԱՂԱՆԻՆԻ» սկսուելով 1852-ի փետրուարի 29 կց տեւել է մինչեւ 1874 թիւը ոչ թէ 1853-ի օգոստոսի 3 ր ինչպէս գրել էր հ. Կալէմբերս. Ուրեմն վերապատուելի հայրը սխալուում է պատեղ աւելի քան քսան տարի, որ է — 20 — XX — ր տարի, թերթին նախկին խմբագիրներ՝ Գ. Սարգսեան եւ Ս. Ազրայեան հեռանալուց յետոյ, լրագրի տակ ստորագրուում էր «ի տպարանի Արարեանց», վերջին շրջանում մինչեւ 1859 թ. Նոյեմբերի վերջին «Նոյեան Աղանան» խմբագրում էր թիւրքիայի մեր անուանի գրադէտներ րից հոնգուցեալ Նիկողայոս Չորայեան, Այս վերջին տեղեկութիւններն իսպառ յայտնի չեն հ. Գրիգորիս վարդապետ Գալէմբերեանին (լրագ. 27. էջ 137)։

«ԱՐՓԻ ԱՐԱՐԱՍԵԱՆ» դադարեց ոչ թէ 1856 թուականի յունուարին 7-դ համարով, ինչպէս գրել է հ. Գ. այլ 1855-ի դեկտեմբերին 6-դ համարով (լրագ. 28 էջ 130)։

«ԹՈՒԹԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ» հրատարակուում էր «Ուշատասիրութեամբ երկց աշակերտաց Մեարմլեան վարժարանին Չմիւռնիոյ», իսկ Գրիգոր Պաւլանը որ խմբագր—տնօրէն էր «Թռչնիկ» օրագիր ամսօրեայի, յետոյ միայն քահանայապետով կոչուեց Տ. Կրթանէս (լրագ. 29. էջ 142)։

«ԱԻՏԱՅԵՆԻ» բողոքականների ձեռքով կոստանդնուպոլսում հրատարակուող կրօնական, ուսումնական, ընտանեկան եւ քաղաքական շարափաթերթերի մասին հ. Կալէմբերս աններելի սխալներ է անում «Աւետարները» սկսուել է 1845 թուականին, իսկ Վիեննայի Միլիթարեան ուկտի վարդապետն ասում է «Աւետարների առաջին թիւն լրցւ տեսաւ 1855 յունուարի 3 ին»։ Ուրեմն վերապատուելի հայրը սխալուում է պատեղ ամբողջ մի տասնեակ տարի (իմն 40 տասն տարի), Բայց զարմանալին այն է որ իւր գրքոյի վերջում ասում է որ 50 տարի է որ դպրութիւն ունի, Ուրեմն հ. Գ. մի րոպէ, մի ակնարկ չը ձգելով շարափաթերթի ճակատին որ գըրուած է «Հասար Խէ» պոքնըն 47 դ տարի, խճճում ու շփոթում է իւր ունեցած տեղեկութիւնները, ի թէ ըստ վարդապետի ընդունենք որ «Աւետարներ» սկսուել է 1855 ին, 50 տարեկան կարող էր լինել 1905 թուականին միայն եւ ոչ 1890-ին ինչ ժամանակ իւր տեսութիւնը գրել է։

Այս էլ ասենք որ «Աւետարներ» աղէտարներ լրագիրը շարափաթերթի թիֆլիսուեց ոչ թէ 1877 ին այլ 1870-ին, Տարբերութիւն եօթն (7) տարուան, այդ հաստատուում են մեր ձեռքում եղած «Աւետարների» հատորնիւրը։

«ԱՐԾՈՒԻՒՎ ԱՍՊՈՒՐԱՎԱՆ» արդահոյակի ամսօրեայի մասին էլ պակաս չեն գրքոյիս մէջ եղած սխալ մուշնները, Մատնիկիս հեղինակը երեւի հիմնուելով իւր աղբիւրների վրայ (որոնք նոյնպէս սխալուած են այս բանում) գրել է որ «Արծուի վասպուրականի» ի տարին «որ 1862-ի վերջերն սկսու, յը կրցաւ բոլորիւ» այնինքն «որ 1862-ի վերջերն սկսու, յը կրցաւ հասն հ. Գալէմբերեան երբ մեր ձեռքում տեսնի 1864 թուականի

վերջերի համաւերը, եւ ինչքան կը զարմանայ երբ լսէ որ «Արծուի վասպուրականի» 8-րդ տարին որպէս շարափաթերթ ազգային տեսուած է մինչեւ 1873 թուականի յունուարի 13-ին երբ վերհասու խմբագիրը նոր թարգած Բազանդալիս պատրիարքական դահը դործում էր Հայաստանում, Սխալմուշք տասը (10) տարուան (լրագիր 34 էջ 152)։

«ԱՐԻԵԼԻՔ» Փարիզու հանդէս Նիսամնեայ վերջացաւ 1856 թուականի փետրուարի 1-ին, 15-րդ տետրակով ոչ թէ 14-րդով (լրագիր 35. էջ 156)։

«ՄԵՂՈՒ» կոստանդնուպոլսի տասնօրեայ հանդիսի մասին խօսելիս Միլիթարեան միտքանը սկզբում բոլորովին անտեղեակ է եղել որ յեղալ թիւթը վերջերքում հրատարակուել է եւ մեր անդուգական երգիծարան հանգուցեալ Յ. Պարոնեանի խմբագրութեամբ, թէեւ իւր «Յաւելուած» մէջ յիշել է այդ բանը, եւ մինչայն ժամանակ 1874 թուականին հրատարակուած լինելու համար կարծիք է յայտնում։

Գիւրն էր 1857—1858 ութտու (կիսամետոյ)  
1859—1865 քառածալ (տասնօրեայ)  
1870—1874 երկծալթերթ (երեքօրեայ)

Վարդապետ հեղինակը գրում է՝ թէ «... Այս բովանդակութեամբ եւ նոյն դրիք շարունակուեցաւ մինչեւ ի տարուայ վերջն՝ 1858 սեպտեմբ. 31-ը»։ Թոյլ ենք աւելիս մեզ ցոյց տալու ուսումնական վարդապետ հ. Գալէմբերեանին, որ սեպտեմբեր ամիսը միշտ եւ հանապաղ 30 օր է եւ ոչ 31. . . .

«Մեղուի» մասին փակում ենք մեր խօսքը այս եւս աւելացնելով որ տարբեր անձնաւորութիւններ են «Մեղուի» խմբագիր Յարութիւն Սուաճեան, եւ «Արշալոյս Արարատեանի» խմբագիր Յ. Սուաճեան (լրագիր 36 էջ 157)։

«ՄՈՒՍՍԵՔ ՄԱՍԵԱՍ» տետր թատերական «Հնդիւնակ եւ տնօրէն Արմենակ (ոչ Արամ) Հ. ձիգմէճեան»։ Արմենակ Հայկունին եւ Արմենակ Հ. ձիգմէճեանը միեւնոյն անձնաւորութիւնն է, Գրքը ոչ թէ միածալ թերթ էր այլ ութածալ տետրակ 58 էջ 13×20 հ. — մետր. Հ. Գալէմբերսը դռնէ ուշագրութիւն դարձել որ գրուած է տետր թատերական « եւ ոչ թերթ կամ գիրք» Տպարան ոչ թէ «Արեւելեան» այլ «Յ. Միւհէնտիսեան»։ Մուսայր Մանեայ «այնպէս էլ մի զուտ մասնագիտական թերթ չէ՛ տեսնուած գրում է գրքոյիս պատուելի հեղինակը, Մեր ձեռքում եղած տետրակների մէջ շատ գրուածներ կան, որ բոլորովին դուրս են թատերական ծրագրից. ինչպէս օրինակ՝

- Պ. Եղուարդ Տիւրքիէ եւ պ. Վիթթոր Լոնդուս (արձակ եւ ստանաւոր)
- Ուր երկիր իմ հայրենի (ստանաւոր)
- Ժառի մը միայ սպաստանած նուաբեկեալի վերջին խօսքերը (ստանաւոր)
- Կարեւոր ծանուցմուք եւ պն.

Այս պարբերականը դադարեց իւր «անսամ լազտախօսութեամբ» որ համակրողներ չունեցաւ (լրագիր 40 էջ 16)։

«ՄԵՂՈՒ ՀՈՅԱՍՏԱՆ» լրագրի մասին խօսելիս գրքոյիս արժանապատիւ հեղինակը մի տեսակ յարձակուական օճ է բանացնում եւ չսփառանք խստապահանջ դաւանում, Յանկով էր որ բոլոր լրագրների մասին անխտր

չափաւոր օճով գրէք բարձրագատիւ պատմաբանը իւր տե-  
տութիւնը, կրեւի «կոյր պահպանողական» Մեղրուի ուղ-  
ղութիւնը գուր չի հկել կաթոլիկ վարդապետին, որը շա-  
րունակ պարսաւում էր հոգւով ու մարմնով Հռովմին  
կցած հայ դաւանափոխ կղերականներին, Վերջում հ.  
Վ. աւելացնում է «թող յորդորէ այս օրինակը մեր իրմ-  
բագրիները՝ իրենց օրերն անօրոստ (անօգուտ) եւս առա-  
ւել թ վնաս հասարակութեան չանցնել» — Գեղեցիկ ցանկու-  
թիւն . . . Արագիր 43 էջ 179) :

• ԱՐԵՆՄՈՒՏԻ • Լրագրով հ. Գալէմբարեան վեր-  
ջացնում է իւր տեսութիւնը, հասնելով 1859 թուականի  
վերջերը, յիշելով ընդ ամենը 45 լրագիր :

Չի կարելի ցը նկատել որ հ. Գ. Գ. այդ 45 լրա-  
գիրները մէջ մտցրել է «ձերպատէթ թիճարէթ» տաճկերէն—  
յուսար. — գաղղրբէն աւելարական լրագիրը, որ այնքան  
էլ հարկաւոր չէր հայ լրագրաց ցարկը մտցնել, Գորս հա-  
կառակ ինչպէս վերեւում յիշեցինք, բացի նրանից, որ մի-  
տրիւն թերթեր միայն էլ է միմեանց մի հրատարակութիւն  
հաշուելով, եւ բաց է թողել երեք լրագրի անուն, (3) :

ա. 30-ական թուականների • Տիգրբբ • հանդէսը :  
բ. 58—62 — թ. • Տոմար ընտանկան • տարեգրքը :  
այն եւս վիճմնայի հրատարակութիւն, եւ

գ. 40—ական թուականների վերջերի • Ատղիկ Արե-  
րուհեան • հանդէսը, իսկ այս երեքի տեղ բարեշնորհ հե-  
ղինակը գրեցիք վերջում, «ուղղելիք—յուսարիք» մէջ յի-  
շել է իբր երեք լրագիրներ, որոնցով բարի ցանկութիւն է  
ունեցել հ. Գ. շտտացնել հայ լրագիրների թիւը, ահա  
ընթերցող :

Յ. • Երանօթութիւնը վաճառականութեան • անունով  
այ տեսող է լոյս տեսել Վիէնայում 1819—ին որ առա-  
ջին ու վերջին գիրքն է եղել եւ չի կարելի լրագիր հաշուել,  
Հատուածիս վերջը հ. Գ. հաստատում է մեր բօփը «որ-  
չափ մեզի ծանօթ է այս փորձն յաջողութիւն ունեցած չէ,  
եւ առանց շարունակութեան մնացած է» :

բ. • Գեղմանիոյ եկեղեցական ղեկավարները • 1846  
թուականի Չմիւսնայում տպագրուած մի բրօշիւր հ. Գա-  
լէմբարեանի ձեռքն է անցել եւ աւելորդ չէ համարել  
իւր պատմութեան մէջ «խօսել» • «զոր կարելի է լրագիր  
ն կ ա տ ե լ • անմեղբէն յուսելացնում է եւրոպացի վար-  
դապետը :

գ. • Մինկափոր անունով 1847 թուականին իբր  
Սինդափորում մի բրօշի կայ օգել, սյդուրը հ. Գ. քա-  
ղել է «Թոշնիկ Պիգասեան» լրագրի 1861 թ. համա-  
րից, ընթ սր ամեն սր լրագրական ընթացիկ լուր չի երա-  
կանուում, Հ. Գալէմբարեան եթէ կարդում է կովկասի մեր  
թիւթերը, չորանց մէջ շատ պատահած կը լինի զոնաք ն  
հայաբնակ քաղաքներից դուրս անց այդ տեսակ լուրերի, Մի  
տեղից գրում են «առաջիկայ տարուանից ընչպէս լուսւմ երբ  
այստեղ հրատարակուելու է մի նոր հայերէն լրագիր •  
նվ է յիշում • Արագած • Ղալմուզալ • • Գարեվուք •  
եւ այլ եւ այլն, Գայիս է այդ առաջիկայ տարին եւ ոչ մի  
նոր լրագիր չի երեւում, անյաջողութիւնների հանդիպած  
լինելով Այդպիսի հանաքներ կրկնուում են ամեն տարի եւ  
անցնում են, Հ. Գալէմբարեան իրաւի եթէ ցանկութիւն  
ունէր հայ լրագրութեան թիւը բազմացնելու մասնաւոր  
իւր գրեցիկ մէջ) կարող էր որպէս լրագիր գրել արեւելի-  
կագոս Գարեվել Ս յաղղով քաւ. Ղարան • կոչուած տեսարակ  
ները, Բագում արթ. Տեր Գրիգորի «Սոխակները, Ս. Լջ-

միաճնում, կրուսողէմում, Կ. Պոլսում, Թիֆլիսում, Վի-  
նետում եւ Վիէնայում պարբերապէս հրատարակուող  
«Սոցցոցներն ու գրքերի «Յուցակները եւ այլ միտուն  
հրատարակութիւնները այլապէս չէր կարելի բազմ, ցնել  
դարուս անցեալ կիսի ճիշդ 49 լրագիրների թիւը :

Թուելով գրեցիկս պակասուոր կողմերը, չենք կա-  
րող անոնս անել երկի այն արժանաւորութիւնները, որոնք  
գնահատելի են եւ պիտանի բանասէր արձանց, Հ. Գալէմ-  
բար խելցի կերպով իւր աշխատութեան մէջ առաջ է  
բերել մեր նշանաւոր թիւթերի ու հանդէսների բոլոր աղ-  
գային—գրական—ուսումնական ու գիտնական յօդուած-  
ների ցանկը, որքան որ հեշտ էր այդ անկը, այնքան եւս  
պիտանի :

Չենք ուզում երկարացնել մեր քննութիւնը հ. Գա-  
լէմբարեանի գրեցիկի մասին, սպասում ենք որ ապագա-  
յում լոյս տեսնելիք Բ գրքիցը հեռու լինի այսպիսի  
նշանաւոր պակասութիւններից, Հայր սուրբի Բ գրքիցի  
գրելու միջոցին որպէս մի հարուստ աղբիւր կարող է ծա-  
ուայել «Հայոց սուրբեր, մամուլը» :

• Հայ լրագրութեան հիմնական եւ քննական պատ-  
մութիւնը գրել այնպէս ժամավաճառ գործ մըն է եւ  
կապել ներքին եւ արտաքին ղեկավարութեամբ—իւր գրքիցի  
• ներածութեան • մէջ գրում է Գ. Վ. Գ.—որ զարմանակի  
չերեցաւ մեզի՝ երբ միշտե ցայսօր յարգի գրասէր գիտնոց  
մեռնարկու մը չը տեսնը :

Ճիշդ է որ «Հայ լրագրութեան» կամ «Հայ մամուլի»  
ընդհանուր եւ քննական պատմութիւնը գրելը «ժամավա-  
ճառ» գործ է, Ան մտաբը որ չորս—չինգ տարի աշխատել  
է պարբերական մամուլի պատմութիւնը գրելու, նա առ-  
ուսագը կարող էր երկու կամ երեք ուրիշ գրքեր հրատա-  
րակել, ձեռք է շոյնպէս որ «ազգային լրագրոց անգին  
թերթերը թերեւս գրատան մութ անկիւնները փոշոյ տակ  
կը սպասեն», մինչեւ որ արգի գրասէր ու հետաքրքիր անձը  
հասնէ զիրենք մուսացուրեան անպատակ անդուռէն, Բայց  
այժմ տեսնը թէ հ. Գալէմբարեանի ունեցած պայման-  
ները ձեռնառու եւ օժանդակ են մի այդպիսի գործ լոյս ըն-  
ծայելու, եւ այդ պայմաններում մի թեթեւ գրքիցի հրատա-  
րակել կարելի է տաժանակի աշխատանք, անմուղիբու-  
թիւն, գովեստ եւ այլ նման գործ համարել : Ահա թէ հ.  
Գալէմբարեան ինչ տեսակ պայմանների տակ է գրել իւր  
գրքիկը :

Հեղինակը կովկասի մի դաւառական քաղաքում չէ,  
այլ եւրոպական մի նշանաւոր մայրաքաղաքում, Գրադա-  
րաններից, գրատներից հեռու չէ, այլ գրականութեան ծո-  
վի մէջ, հարուստ գրադարանում նստած, այն եւս մատե-  
նադարանայետ :

Թողնում ենք միւս համեմատութիւնները :

Գ. Հեւոնեան :

